



Ա. Պ. ԳԵԽՈՎ

ՏՂԱՆԵՐԸ

891.715
Գ-34

937

16207
JK
36695

891.714
9-34

Ա. ԶԵԽՈՎ

30 MAY 2011

Տ Ղ Ա Ն Ե Ր Ը

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ
Նկարները Պ. ԱԼՅԱԿՐԻՆՍԿՈՒ

БИБЛИОТЕКА
Государственного музея
ДЕТСКОЙ КНИГИ

ՊԵՏՂՐՍ
ՀԻԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊՍՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

20733

6 JUL 2013


4582

ՓՈՔՐԱՀԱՍՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ Ն.Բ. ՉՈՓՈՒՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ԽՈՒՂՅԱԿԵՐԿՅԱՆ
Սրբագրիչ՝ Ռ. ՆՆԱՆՅԱՆ

Գլավիկի լիստո Կ-4465, հրատ. 3878
Պատվեր 1133, տպած 3000
Պետհրատի տպարան, Յերեվան, ԻԻ Կնուսեյանցի 4

(1768.)



— Վոլոդյան լեկավ, — բղավեց մեկը բախում:
— Վոլոդիչկան յեկավ, — բացականչեց Նատալյան, ներս վազելով սեղանատուն: — Ախ, աստված իմ: Կարալյովներին ամբողջ ընտանիքը, փորը ժամ առ ժամ սպասում էր Վոլոդյային, նետվեց դեպի լուսամուտները: Գլխավոր մուտքի առաջ կանգնած էր մի լայն սահնակ, և յերեք սպիտակ ձիերից թանձր գոլորշի յեր բարձրանում: Սահնակը դատարկ էր, փորովհետև Վոլոդյան արդեն՝ կանգնած էր նախասենյակում և կարմրած, մրսած ձեռքերով արձակում էր գլխանոցը: Նրա գիմնազիական վերարկուն, գլխարկը, կրկնակոշիկներն ու քունքի մագերը ծածկված էին յեղյամով, և նա ամբողջովին գլխից մինչև փոք աշնպիսի մի դուրեկան սառնամանիքային հոտ երարձակում, փոր, նրան նա յելով ուզում է յիր մրսել և ասել՝ «բրո-ու-ու»: Մայրն ու մորաքույրն շտապեցին գրկել ու համբուրել նրան, Նատալյան ընկավ նրա փոքերն ու սկսեց հանել թաղյակները, քույրերը ճշոց բարձրացրին, դռները



20804-59

ճոճուում եյին, թրրիկում, իսկ Վոլոդյայի հայրը
ժիլետով ու մկրաար ձեռքին ներս վազեց նախա-
սենյակ ու բացականչեց վախեցած՝

— Իսկ մենք քեզ դեռ յերեկ եյինք սպասում:
Լամ տեղ հասար: Բարեհաջող: Տեր աստված իմ,
ախրը թողեք մի հոր հեռ վողջագուրվի: Ի՞նչ ե, չը-
լինի թե յես դրա հայրը չեմ:

— ՀնՖ, հնՖ, — թավ ձայնով հաջում եր Մի-
յորդը՝ հսկայական շունը, թխկթխկացնելով պոչը
պատերին ու կահկարասիքին:


Սմեն ինչ միացել, դառել եր մի միասնական
համատարած, բերկրալից հնչյուն, վոր տեեց մոտ
յերկու րուպե: Յերը ուրախության առաջին թա-
փրն անցավ, կարանյոգները նկատեցին, վոր բացի
Վոլոդյայից նախասենյակում գտնվում եր նաև մի
փոքրիկ մարդ, փաթաթված թաշկինակներով, շա-
լերով ու գլխանոցով և ծածկված յեղյամով: Նա
անշարժ կանգնած եր անկյունում ազվեսի մեծ
քուրքից ընկնող շվաքի մեջ:

— Վոլոդիչկա, իսկ դա ով ե, — հարցրեց շնջա-
լով մայրը:

— Վնհ, — գլխի ընկավ Վոլոդյան. — Իա, պատիվ
ունիմ ներկայացնելու, իմ ընկեր Չեչևիցյինն ե,
յերկրորդ գասարանի աշակերտ... Յես նրան բերել
եմ մեզ մոտ հյուր:

— Շատ ուրախ եքք, շնորհ արեք, — ասաց ուրա-
խացած հայրը. — Ներեցեք, յես տնավարի, առանց
սերթուկի յեմ... Խնդրեմ համեցեք: Նատալյա, ող-
նիր պարոն Չեչևիցյինին հանվելու: Տեր աստված
իմ, դե մի քչեք եղ շանը: Իա պատիվ ե:

Մի քիչ հետո Վոլոդյան ու նրա բարեկամ Չե-
չևիցյինը, ազմկոտ հանդիպումից ջգամ ու ցրտից



— Իսկ յիստիորիմուրթի ստն Չ կանդնամ եր մի լալն սանակ:

զեռևս վարդագուլն, նստած եյին սեղանի մոտ ու թեյ եյին խմում:

Չմեռային արեգակը, թափանցելով լուսամուտների վրայի ձյան ու նախշերի միջով, դողդողում եր ինքնայեռի վրա ու լողացնում եր մաքուր ճառագայթները թեյի փողոցաթասում: Սենյակում տաք եր, և տղաներն զգում եյին, թե ինչպես նրանց մրսած մարմիններում, չցանկանալով տեղի տալ իրար, խտրովում եյին տաքությունն ու ցուրտը:

— Ահա՜ շուտով և ջրորհներն ե. — ասում եր ձիգ տալով հայրը, մոռթ շիկագուլն ծխախոտից գլանակ վոյորելով: — Իսկ վաղուց եր, վոր ամառ եր, և մայրըդ լաց եր լինում քեզ ճամփու դնելիս: Ըհը՛, տեսար հրես դու ել յեկար... Ժամանակն, ախպերս, արագ ե անցնում: Պարոն Չիրիսով, համեցեք, շատ եմ խնդրում, մի քաշվեք: Մեզ մոտ պարզ պիտի լինել:

Վոլոդյայի յերեք քույրերը՝ Կատյան, Սոնյան և Մաշան — նրանցից ամենից մեծը տասնմեկ տարեկան եր — նստած եյին սեղանի մոտ և աչքները չեյին պոկում նոր ծանոթից: Չեչեիցյինը նույն տարիքին ու հասակին եր, ինչ վոր Վոլոդյան, բայց այդքան թխտիկ ու սպիտակ չեր, այլ նիհար եր, թուխ, ծածկված պեպեններով: Նրա մազերը կոշտ և ցցված եյին, աչքերը նեղլիկ, շրթունքները հաստ, ընդհանարապես նա շատ տգեղ եր, և յեթե նրա հագին գիմնագլխական կուրտիկա չլիներ, ապա նա իր արտաքինով նման կլիներ խոհարարուհու տղայի: Նա մոռյլ եր, միշտ լուռ և վոչ մի անգամ չժպտաց: Աղջկերբը, նայելով նրան, իսկույն գլխի ընկան, վոր դա, յերևի, շատ խելոք և գիտուն մարդ ե: Նա անընդհատ մտածում եր ինչ վոր բանի մա-



— Հնաճ, հաճ, — թավ ձայնով հաշում եր Միլոբոզ:

սին և այնպես երզբազված իր մտքերով, վոր յերբ նրան հարցնում եյին վորևե բանի մասին, նա ցնցվում եր, թափ եր տալիս գլուխն ու խընդրում կրկնել հարցը:

Աղջկերքը նկատեցին, վոր միշտ ուրախ ու ասող-խոսող Վոլոդյան ել, այս անգամին խոսում եր քիչ, բոլորովին չեր ժպտում և կարծես նույնիսկ ուրախ չեր, վոր յեկել եր տուն: Քանի դեռ նստած եյին թեյի, նա դիմեց իր քույրերին միայն մեկ անգամ, և այն ել ինչ վոր տարրորինակ խոսքերով: Նա ցույց տվեց մատով ինքնայեռն ու ասաց՝


— Իսկ Կալիֆորնիայում թեյի փոխարեն խմում են ջին:

Նա ել եր զբաղված ինչ վոր մտքերով, և այն հայացքները, վոր յերբեմն նա փոխանակում եր իր բարեկամ Չեչևիցյինի հետ, յեզրակացնել եր տալիս, վոր տղաների մտքերն ընդհանուր եյին:

Թեյից հետո բոլորն անցան փոքրերի սենյակը Հայրն ու աղջկերքը նստեցին սեղանի մոտ ու ըզբազվեցին գործով, վորն ընդհատվել եր տղաների գալով: Նրանք գույնզգույն թղթից շինում եյին ծաղիկներ ու ծոպավոր ժապավեններ տոնածառի համար: Իսկ գրավիչ ու ազմկայի աշխատանք եր: Ամեն մի նոր շինած ծաղիկն աղջկերքը դիմավորում եյին խանդավառ բացականչութուններով, նույնիսկ սարսափի ձայներով, կարծես այդ ծաղիկն ընկնում եր յերկնքից: Հայրիկը նույնպես սրանչանում եր և յերբեմն գցում եր մկրատը գետին, բարկանալով նրա վրա, վոր նա բուժ ե:

Մայրը ներս եր վազում փոքրերի սենյակը սաստիկ մտահոգված ղեմքով ու հարցնում՝

— Ո՞վ ե վերցրել իմ մկրատը: Ելի Իվան Նիկայանիչ, դու յես վերցրել իմ մկրատը:



— Իսկ Կալիֆորնիայում թեյի փոխարեն խմում են ջին:

— Տեր աստված իմ, նույնիսկ մկրատը չեն տալիս, — պատասխանում եր լալկան ձայնով Իվան Նիկալայիչն ու յետ ընկնելով աթոռի մեջքին, վիրավորված մարդու դիրք եր ընդունում, բայց մի ըրպե անցած նորից սքանչանում եր:

Իր նախընթաց այցելու թյուներերի ժամանակ Վոլոդյան նույնպես զբաղվում եր տոնածառի պատրաստություններով, կամ վազ եր տալիս բակը նայելու, թե կառապանն ու հովիվն ինչպես են ձնե սար շինում, բայց հիմա նա ու Չեչևիցյինը վոչ մի ուշադրություն չդարձրին գույնգույն թղթի վրա և նույնիսկ վոչ մի անգամ չեղան ախոռում, այլ նստեցին լուսամուտի մոտ ու սկսեցին շնչալ ինչ վոր բանի մասին: Հետո նրանք միասին բաց արին աշխարհագրական ատլասն ու սկսեցին նայել ինչ վոր մի քարտեզ:

— Սկզբից Պերմ... — կամաց ասում եր Չեչևիցյինը... — Ենտեղից Տյումեն... հետո Տոմսկ... հետո... հետո... Կամչատկա... Եստեղից սամոյեզները կանցկացնեն նավակներով Բերինգյան նեղուցից... Ահա քեզ և Ամերիկան... Եստեղ շատ մուշտակավոր գագաններ կան:

— Իսկ Կալիֆորնիան, — հարցրեց Վոլոդյան:

— Կալիֆորնիան ներքեն ե... հերիք ե վոր Ամերիկա ընկնենք, Կալիֆորնիա հասնելը հեշտ ե: Իսկ մեզ համար սնունդ կարող ենք ճարել վորսորդությամբ ու կողոպուտով:

Չեչևիցյինն ամբողջ օրն իրեն հեռու եր պահում աղջկերբից և հոնքերի տակից եր նայում նրանց: Յերեկոյան թեյից հետո այնպես պատահեց, վոր նրան մի հինգ ըրպեյով թողին մենակ աղջկերբի հետ: Անհարմար եր լուռ մնալ նա խստո-



— Սկզբից Պերմ... — կամաց ասում եր Չեչևիցյինը:

րեն հազաց, աջ ափով շփեց ձախ ձեռքը, մոայլ նայեց Կատյային ու հարցրեց՝

— Դուք կարդացել ե՞ք Մայն-Սիդին:

— Վոչ, չեմ կարդացել... Լսեցեք, դուք կարողանում եք չմուշկներով սահել:

Ընկղմված իր մտքերի մեջ, Չեչևիցյինը վոչինչ չպատասխանեց այդ հարցին, այլ միայն սաստիկ ուռցրեց աչտերն ու այնպիսի հոգոց հանեց, կարծես թե սաստիկ շոգում եր: Նա նորից աչքերն ուղղեց Կատյային ու ասաց՝

— Յերբ բիզոնների հոտը վազում ե պամպասներով, դողում ե գետինը, իսկ այդ ժամանակ մուստանգները, վախեցած, քացի յեն գցում ու խրխրնջում են:

Չեչևիցյինը տխուր ժպտաց ու ավելացրեց՝

— Նաև հնդկացիները հարձակվում են գնացքների վրա: Բայց ամենից վատը, մոսկիտներն են ու տերմիտները:

— Իսկ գրանք ի՞նչ են:

— Դրանք մըջնիկների նման բան են, միայն թևեր ունեն: Շատ պինդ կծում են: Կիտե՞ք յես ով եմ:

— Պարոն Չեչևիցյինը:

— Վոչ: Յես Մոնտիզոմո Բագեյի Ճիրանն եմ, անհաղթելիների առաջնորդը:

Մաշան, բոլորից փոքր աղջիկը, նայեց նրան, հետո լուսամուտին, փորի յետևում արդեն յերեկոյեր, և ասաց մտազբաղ՝

— Իսկ մենք յերեկ վոսպ եյինք յեփել:

Չեչևիցյինի բոլորովին անհասկանալի խոսքերը և այն, փորնա անընդհատ փսփսում եր Վոլոդյայի հետ, և այն, փոր Վոլոդյան չեք խաղում, այլ միայն մտածում ինչ փոր բանի մասին, — այդ բոլորը խոր-

հրրդավոր եր ու տարօրինակ: Յեվ յերկու մեծ աղջկերքը, Կատյան ու Մոնյան, սկսեցին ուշադրությամբ հետևել տղաներին: Յերեկոյան, յերբ տղաները պառկում եյին քնելու, աղջկերքը գաղտնաբար մոտեցան դռանն ու լսեցին նրանց խոսակցությունը: Ո՛ր, ինչեք իմացան նրանք: Տղաները պատրաստվում եյին փախչելու ինչ փոր Ամերիկա, փոսկի ձեռ գցելու: Ամեն ինչ արդեն պատրաստ եր ճանապարհի համար՝ ատրճանակ, յերկու դանակ, չոր հաց, խոշորացույց — կրակ ստանալու համար, կողմացույց և չորս ուռբլի փող: Նրանք իմացան, փոր տղաներն ստիպված պիտի լինեն անցնելու մի քանի հազար վերստ, իսկ ճանապարհին կովելու են վագրերի ու վայրենիների հետ: Հետո փոսկի և փողոսկր պիտի հանեն, թշնամիներ սպանեն, գառնան ծովային ավազակներ, խմեն ջին և վերջ ի վերջո ամուսնանան գեղեցկուհիների հետ ու մշակեն պլանտացիաներ: Վոլոդյան ու Չեչևիցյինը խոսում եյին ու տարվելով իրար ընդհատում: Այդտեղ Չեչևիցյինն իրեն անվանում եր այսպես՝ «Մոնտիզոմո Բագեյի Ճիրան», իսկ Վոլոդյան — «Իմ սպիտակամորթ յեղբայր»:

— Տես հա, մայրիկին մի ասա, — ասաց Կատյան Մոնյային, յերբ գնում եյին քնելու: — Վոլոդյան Ամերիկայից կբերի մեզ համար փոսկի և փողոսկր, իսկ յեթե դու ասես, նրան չեն թողնի:

Ջրորհների նախընթաց որը Չեչևիցյինն ամբողջ ժամանակ նայում եր Ասիայի քարտեզն ու ինչ փոր բան գրի առնում, իսկ Վոլոդյան, հոգնատանջ, թխլիկ, կարծես մեղու կծած լինեք, մոայլ ման եր գալիս սենյակներում և փոչինչ չեք ուտում: Յեվ

նույնիսկ մեկ անգամ մանկանոցում նա կանգ առավ սրբապատկերի առաջ, խաչակնքեց յերեսն ու ասաց՝

— Տեր իմ, ներիր ինձ մեղավորիս: Տեր իմ, պահիր իմ խեղճ, թշվառ մայրիկին:

Յերեկոյան դեմ նա լաց յեղավ: Յերբ գնում էր քնելու, նա յերկար գրկում էր հորը, մորն ու քույրերին: Կատյան ու Սոնյան հասկանում էին բանն ինչումն է, իսկ փոքրը, Մաշան, փոչինչ չէր հասկանում, բացարձակորեն փոչինչ, և միայն յերբ նայում էր Չեչեիցյինին, մտածմունքի մեջ էր ընկնում և ասում հոգոց հանելով՝

— Յերբ պասը գալիս է, դայակս ասում է պետք է ուտել սիսեռ և վոսպ:

Ջրորհնեքի առավոտյան կանուխ Կատյան ու Սոնյան կամաց վեր կացան անկողնուց և գնացին նայելու, թե ինչպես պիտի տղաները փախչեյին Ամերիկա: Ծածուկ մոտեցան դռանը:

— Ուրեմն դու չե՞ս գնալու, — բարկացած հարցրնում էր Չեչեիցյինը: — Ասա, չե՞ս գա:

— Տեր Աստված, — կամաց լաց էր լինում Վորդյան: — Բա յես փնեց գնամ, յես մայրիկիս եմ խղճում:

— Իմ սպիտակամորթ յեղբայր, յես քեզ խընդրում եմ, գնանք: Դու ինքդ էյիր հավատացնում. վոր կգնաս, ինքդ ինձ խաբեցիր բերեցիր, իսկ հենց գնալու ժամանակն յեկավ, վախեցար:

— Յես... Յես չեմ վախենում, այլ յես... յես մայրիկիս եմ խղճում:

— Դու ասա՛ կգնամ, թե չե:

— Յես կգնամ, միայն... միայն սպասիր: Յես ուզում եմ տանը մի քիչ ապրել:

— Վոր եղպես է յես ինքս կգնամ, — վորոշեց



Ո՛ր, ինչեր [ումացան] նրանք:

Չեչևիցյիներ:— Առանց քեզ ել յուր կգնամ: Բնս, դեռ ուզում եյիր վագրերի դեմ վորսի գնալ կռիվ անել: Վոր եղպես ե տուր ինձ իմ պատիճները:

Վոլոդյան այնպես դառը լաց յեղավ, վոր քույրերը չգիմացան ու նույնպես կամացուկ լաց յեղան: Լուսթյուն տիրեց:

— Ուրեմն դու չե՞ս գա, — մի անգամ ել հարցրեց Չեչևիցյիներ:

— Կր... կգամ:

— Դե հագնվիր:

Յե՛վ Չեչևիցյիներ, վորպեսզի Վոլոդյային համոզի, գովում եր Ամերիկան, մոնչում վագրի նրման, պատկերացնում շոգենավը, հայհոյում եր, խոստացավ տալ Վոլոդյային ամբողջ փղոսկրը և բոլոր առյուծի ու վագրի մորթիները:

Յե՛վ այդ լղարիկ, թուխ, կոշտամագ ու պեպենոտ տղան աղջկերքին թվում եր արտասովոր, նրշանավոր: Դա հերոս եր, վճռական, անվախ մի մարդ և մոնչում եր նա այնպես, վոր դռան յետևը կանգնած, իսկապես կարելի յեր կարծել, վոր զա վագրը ե, կամ առյուծ:

Յերբ աղջկերքը վերադարձան իրենց սենյակ ու հագնվում եյին, Կատյան, աչքերն արտասուենքով լիքը, ասաց՝

— Ախ, ինչպես սարսափելի յե:

Մինչև ժամը յերկուսը, յերբ նստեցին ճաշի, ամեն ինչ հանգիստ եր, բայց ճաշին բանից դուրս յեկավ, վոր տղաները տանը չեն: Ուղարկեցին ծառաների սենյակը, ախոռը, կողաշենքը— գործակատարի մոտ— այդտեղ նրանք չկային: Ուղարկեցին գյուղ— այնտեղ ել չգտան: Թեյն ել հետո նույնպես խմեցին առանց տղաների, իսկ յերբ նստում եյին

ընթրելու, մայրիկը շատ եր անհանգստանում, նույն իսկ լաց եր լինում: Իսկ գիշերը նորից գնացին գյուղ, փնտռեցին, ման յեկան յապտերներով գետի մոտ:

Աստված իմ, ինչպիսի իրարանցում բարձրացավ:

Մյուս ուրը յեկել եր ուրյադնիկը, սեղանատանը գրում եյին ինչ վոր մի թուղթ: Մայրը լաց եր լինում:

Բայց ահա պատշգամբի մոտ կանգ առավ մի սահնակ, և յերեք սպիտակ ձիերից գոլորշի յեր բարձրանում:

— Վոլոդյան յեկավ, — բղավեց մեկը բակում:

— Վոլոդիչկան յեկավ, — կանչեց Նատալյան, ներս վագելով սեղանատուն:

Յե՛վ Միլորդը հաջեց թավ ձայնով— «հնֆ հնֆ» Բանից դուրս յեկավ, վոր տղաներին բռնել եյին քաղաքում, խանութաշարքում (այնտեղ նրանք ման եյին զալիս ու անընդհատ հարց ու փորձ անում, թե վորտեղ կարելի յե գտնել վառող): Վոլոդյան, հենց վոր մտավ նախասենյակ, իսկույն հեկեկաց ու ընկավ մոր վզովը: Աղջկերքը զողողալով, սարսափած մտածում եյին այն մասին, թե հիմա ինչ պիտի լինի, լուծ եյին, թե ինչպես հայրիկը տարավ Վոլոդյային ու Չեչևիցյիներն իր առանձնասենյակը և այնտեղ յերկար խոսում եր նրանց հետ: Մայրիկն ել եր խոսում ու լաց լինում:

— Մի՛թե այդպես կարելի յե, — համոզում եր հայրիկը:— Աստված մի արասցե, կիմանան գիմնագրայում, դուրս կանեն: Իսկ քեզ համար ամսթ ե, պարոն Չեչևիցյի: Լավ չի: Դուք եք գրգռը, և հուսով եմ, դուք կկրեք ձեր պատիժը ձեր ծնողների

1891



90804-59

կողմից: Մի՞թե այդպես կարելի չէ: Դուք փորտեղ
եք գիշերել:

— Կայարանում, — հպարտ պատասխանեց Չե-
չևիցյինը:

Վոլոդյան հետո պառկել էր, և նրա գլխին դը-
նում ելին քացախով թրջած սրբիչը: Հեռագիր ու-
ղարկեցին ինչ փոր տեղ, և մյուս ուրը յեկավ մի
տիկին, Չեչևիցյինի մայրը, ու տարավ իր փորդուն:

Յերբ Չեչևիցյինը գնում էր, նրա դեմքը խիստ
էր գոռոզ, և աղջկերբին հրածեշտ տալիս, նա վոչ
մի խոսք չասաց, միայն վերցրեց Կատյայի տետ-
րակն ու գրեց իբրև հիշատակ՝

«Մոնտիգոմո Բադեյի Ճիրան»:



« Ազգային գրադարան



NL0386904

ԳՐԵՅՈ ՎՈՂ.

4582

А. П. ЧЕХОВ
МАЛЬЧИКИ
ГИЗ АССР ЕРЕВАН 1937